**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ԳՀԱՊՁԲ-20- 21/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 07.10.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Ի. Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 09.07.2020թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-21/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրիի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 3876480 (երեք միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք Երևան, Վարդանանց 18/2, 106, 117, 125 տարածք. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 2050022151631001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02508699 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-21/1-2 պայմանագրի № 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չ/Մ | Քանակը | Միավորի գին | Ընդհանուր գինը | Մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4-րդ, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ |
| 2 | Լիցենզիաների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ (Լիցենզավորված օպերացիոն համակագ) | հատ | 2 | 119040 | 238080 | 2 |
| 4 | Լազերային տպիչներ (Բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ) | հատ | 1 | 3300000 | 3300000 | 1 |
| 7 | Լազերային տպիչներ (Տպիչ 3-ը մեկում) | հատ | 3 | 112800 | 338400 | 3 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-21/1-2 պայմանագրի № 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| Չ/հ | անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ., ընդ որում՝ |
| | | | 4-րդ եռամսյակ |
| 2 | Լիցենզիաների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթներ (Լիցենզավորված օպերացիոն համակագ) | 48211200/501 | 238080 |
| 4 | Լազերային տպիչներ (Բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ) | 30232110/501 | 3300000 |
| 7 | Լազերային տպիչներ (Տպիչ 3-ը մեկում) | 30232110/502 | 338400 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Ն. ՑՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
տնօրեն
Ր. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Մա Ռ. Անդրեասյան